զիկառնիայ կանդնեալ շիրիմն վասն Մաւսոլիոսի թագաւորին, այնչափ մեծագործ էր և փառաղարդ, մինչև Հռոմայեցւոց զամենայն մեծագործ շիրիմս կոչել Մաւսոլէոն։ Ապա զՀեղինեայն յիշէ, այլ սակաւուք ստորագրելով՝ ասէ այսպէս. «Բայց առ Եբրայեցիս 'ի քաղաքին Սաղիմացւոց, զոր կայսրն Հռովմայեցւոց 'ի հիմանց քանդեաց, գտանի Հեղինեայ տիկնոջ բնակչի Շէրէմ հրաշակերտ, զի դուռն է գործեալ 'ի նմա մարմարոնեայ, որպէս են և այլ կողմանք շիրմին. այս դուռն 'ի պայմանեալ աւուր տարւոյն և 'ի ժամու գաղտնի իմն շարժմամբ մեքենայի բանի, ապա յետ սակաւուց փակի, զոր թէ յայլում ժամանակի գուն գործեսցես բանալ, յաւէտ խորտակել կարասցես քան թէ փակել»։

Ի նարդեան ժամանակիս թէպէտ և յայտնի է տեղին՝ և յամենեցունց անգիտաբար կոչի գերեզմանք թագաւորաց, այլ չնշմարեն այնպիսի ճարտարուեստ և հրաշակերտ հետք շինուածոյ շերմի, զի դառնութիւնք ժամանակին յաւէր և յապականութիւն դարձուցեալ են զբովանդակ տեղին։ Արդարեւ երեւէին 'ի փլատակս նորին թաղեալք ընդ հողով բեկորք միապաղաղ քարեայ դրանց, խոյակք սեանց և այլոց իրաց, և 'ի ճակատ արտաքին վիմափոր դահլճին մնացորդք մանրաքանդակ նկարուց, նկանակ հացի, ոզկոյզ խաղողոյ, արմաւենի և պսակ։ Իսկ ներքին կառածոյ այրն բաժանեալ 'ի խորշս և 'ի սենեակս, և յիւրաքանչիւրումն տեղի հանգուցանելոյ զդիական հանդերձ աղեղնաձեւ կամարաւ։ Եւ 'ի ժամանակի մերում Եւրոպացի Պ. Սաւլոի, այրն գիտնաւոր եդիտ զշերիմս միոյ թագուհւոյ ամբողջ նորին ոսկերովք։ Ապա յամի 1875 զտեղին զայն գնեցին ամբողջ Գաղիացիք. և 'ի մաքրելն գտին զշրամբարս, և զհին յատակս յարտաքին դաւթի, և 'ի ներքս զմի տապան ամբողջ ոսկերովք, զոր բարձեալ առաքեցին 'ի Փարիզ և է այժմ 'ի ձեռս նոցա։

Իսկ զպալատն թագուհւոյն Հայոց Հեղինեայ ցուցանէ Յովսեպոս Եբրայեցի 'ի գիրս պատերազմացն Հրէից՝ լինել յայնժամ 'ի մէջ քաղաքին Երուսաղէմի, յորում տեղւոջ երեւի այժմ փառաւոր շինուածք 'ի ձեռս Արաբացւոց, և կոչի Թէէմ, և ըստ ազգային աւանդութեան կան մնան